

տանգայ կողմնապնտաց աշխարհին Արցախու առեալ հանէի սնոյց զիմ եւ իւր տանն Աւազին (?) իւրեան ազգին (?) առաջնորդ կացոյց, զի ոչ ունէին զաւակ. յուսով խնդրնցի զայս նկեղեցին ինծ շիրմ հանգստնան. Աւազն ինծ երէտ եւ միաբանքս սահմանեցին զայս խորանս պատարագնել ինծ գ-ըս. հանապազ. ով կարդայք Աւազին երկար կենդանութիւն խնդրեցէք եւ Դրիգորոյս մեղաց թողութիւն. թէ աւազ կամ առաջնորդ խափանէ յժը (318) հայրապետացն նզոված է եւ մեր մեղացն տէր է»:

Այս արձանագրութեան բրվանդակութիւնը ճշտիւ համապատասխանում է Կիրակոս պատմաբանի առւած տեղեկութեանը Դրիգորի մասին, որ յետոյ կառուցել առւեց և սուրբ Դրիգորի զեղցիկ տաճարը:

III

ՍՈՒՐԲ ԴՐԻԳՈՐ

Գաւթի հարաւային որմին արտաքուստ կցուած է մի փոքր, գեղեցկաչէն տաճարի շինքը: Այս հոյակապ տաճարն առանց զմբէթի է: կոտորը ծածկուած է սալ քարերով, որմնցից մի մասն արդէն թափուել է: Մուտքն արևմտահան կողմից է: Եկեղեցու թէ մուտքը և թէ առնասարակ արտաքին պատերը զարդարուած են գեղեցիկ և նուրբ քանդակներով:

Եկեղեցկաքանդակ տաճարի հարաւային պատն արտաքուստ խախուուած է և այդ իսկ պատճառով չէ կարդացւում դրա վրայի երկու առջից բաղկացած արձանագրութիւնը. միայն այսպահն է որոշուած:

«Ի ՌՀԶ—686 հայոց և 1237 փրկարական թ.—ես Դրիգոր որդի Ա... (երեխ Սմբատայ) . . . միաբանքս ետուն զաւագ խորան եկեղեցւոյ ինձ պատարագ . . . զատիք ի ծեանէ . . . ոչքն (երեխ կատարուզն) աւրհնին յԱստուծոյն:

Տաճարը ներսից նոյնագէս զարդարուած է քանդակագործ սիւներով և պատերով. առաստազը միայն մի կամարից է բաղկացած: Խորանամեծ սեղանի պատերը նոյնագէս նուրբ քանդակներ ունին. յատակը ծածկուած է եղել սալ քարերով, որոնք այժմ վերցուած են. արտաքին լոյսը ներս է թափանցում երեք լուսամուտների միջով: Բնմի աջ և ձախ կողմերում կան փոքրիկ խորաններ: Տա-

նարի երկարութիւնն է 5 արշին 3 վերշոկ. լայնութիւնը՝ 5 արշին 10 վերշոկ. բնմի բարձրութիւնը՝ 1 արշին 6 վերշոկ է, ներսից՝ տաճարի պատերի վրայ ոչ մի արձանագրութիւն չկայ:

Այս փոքրիկ, բայց հոյակապ քանդակագործութեամբ և խնամքով կառուցուած տաճարն այժմ թէն անուն չունի, բայց նշանի համապատասխանում է Կիրակօս պատմաբանի յիշած Սր. Գրիգոր եկեղեցուն¹⁾, որ յինն առեւն Գրիգոր իշխանը. այս Գրիգորը մեր առաջ թերած արձանագրութիւններից մէկի մէջ (15) իրեն անուանում է ոռողի Սմբատայք և թոռն Ալբագանու կողմանցետ մեծ Վախուանցից:

Սր. Գրիգորի մուտքի աջ և ձափակութիւնը, արտապուստ, գըրուած են երկու խաչքար, որոնց քանդակները գերազանցում են մեր տեսած բոլոր խաչքարերի քանդակներին և առանց չափազանցութեան կարելի է ասել, որ հրաշալի են. Մուտքի աջակողմնան խաչքարը գըրուած է պատուանդանի վրայ, իսկ ձափակութիւններ՝ զետնին, առաջինն ամբողջ է, իսկ երկրորդը կոստուած և երկու մասն եղած: Աջակողմնան խաչքարի պատուանդանի վրայ արձանագրութիւն կայ, բայց տարաբազզաբար կարենրադոյն մասը, անունը, չի երևում. Խեցածը հետեւան է.

* * * . Վարդապետ կանգնեցի զիսալս ի վերայ շիրմիցն . . . զաց (երկի ծնողաց) իմոց և եղբարց և ինձ թէ Տէ՛ր կամեցի որ և . . . ողորմեացի Աստուած, բարեխաւսութեամբ ամենայն որբոց. ի թվ. Զեւ. — 740 հայոց և 1291 փրկչական թ.:

Աջակողմնան խաչքարի բարձրութիւնն է 3 արշին 3 վերշոկ, լայնութիւնը՝ 1 արշին 7 վերշոկ. պատուանդանի բարձրութիւնն է 2 արշին 1 վերշոկ. Զափակողմնան խաչքարի բարձրութիւնն է 2 արշին 14 վերշոկ, լայնութիւնը՝ 1 արշին 10 վերշոկ:

IV

ԴԱՐՁԵԱԼ. ՍՐ. ԳՐԻԳՈՐ

Աստուածածնայ մայր տաճարի հարաւային պատի մօտ կառուցուած է մի այլ եկեղեցից, որ այժմ առւըր Գրիգոր է կոչում. տաճարի միայն պատերն են անխախտ, կաթուղիկն և գմբեթը աւերտած կործանուած են: Մուտքն արեմնաեան կողմից է՝ կա-

¹⁾ «Ճինոց և հշաշազոն եկեղեցից մի՝ երեխարանի, մեր ի զաւիթ» եկեղեցւի, շինուած զարմանակեր, և անուանեցաւ եկեղեցին յանուն ոքոյն Նըհուրիւն-Նըհուր. էջ 130.:

մարտկապ և սիւնազարդ. հարաւային պատի վրայ, արտաքուա, արեի ժամացոյց կայ. Մուտքի ձափի կողմի պատուանդանների վրայ կան երկու խաչքարեր՝ առանց արձանագրութեան:

Տաճարը ներսից նոյնպէս կառուցուած է մաքուր, սրբատաշ քարից. կաթուղիկէն կանգնած է եղել առանց սիւների, կամարների վրայ. առնն մի կամարի մէջ մի լուսամուա է եղել. Յատակն այժմ ծածկուած է հողով, սակայն հաւանօրէն սկզբումը սալ քարով կլինէր շնուռած: Բնմի աջ և ձափի կողմը զանուում են երկյարկանի խորաններ, վերին յարկ խորանների մուտքը բեմիցն է: Բնմի այժմ հատառատուն աստիճաններ չունի, քարեր են դարսուած:

Տաճարի երկարութիւնն է 14 արշին 6 վերշոկ. լայնութիւնը 10 արշին 1 վերշոկ. կամարների միջի տարածութիւնն է 3 արշին 12 վերշոկ. կամարների բարձրութիւնն է 11 արշին և վերշոկ: Բնմի բարձրութիւնն է 1 արշին 11 վերշոկ:

Այս տաճարի շինքը ճշտիւ համապատասխանում է Կիրակոս պատմագրի յիշած այն եկեղեցու նկարագրութեանը, որ Մարտիրոսի վանահայրութեան ժամանակ կառուցուեց, մի առ ժամանակ թիրի մեաց և յետոյ ՌԴ—690 հազոր և 1241 գրկչական թուին աւարտեց Գրիգոր Կապալեցին¹⁾: Կիրակոսն արև եկեղեցու անունը չէ յիշում. արդեօք այս տաճանքն էլ սկզբից սուրբ Գրիգոր կոչուեց թէ Գրիգոր Տղաքի կառուցած եկեղեցու անունը սրան են վերագրել՝ ճշտիւ յայտնի չէ: յիսոթութիւնը նորնից է առաջանում, որ կիրակոս պատմագրի յիշած սուրբ Գրիգորն այժմ անուն չունի, իսկ այն եկեղեցին, որի անունը նա չէ յիշում, այժմ սուրբ Գրիգոր է կոչւում:

ԱԲ. ԳՐԻԳՈՐԻ ԱՐՀԱՆԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տաճարի արեմանան սիւնազարդ մուտքի կամարից բարձր կայ մի խաչքար, որի շուրջն արձանագրուած է.

1) «Ած. ողորմեսցի Մազար Շահին եւ ծնողաց նորին»:

Մուտքի ճակատի քարի վրայ.

2) «Յուսովն Աստուծոյ բ եղացարք Մարտիրոս եւ Գրիգոր

¹⁾ «Սկսան շինել է այլ եկեղեցի մի հնեց խորանոց, իսփածոյ և առշուն վիճակը, զմրէթուոր և զեղեցիկ շինուածով. և իրք ընդմիջնցու եկեղեցին՝ խոփանման եղան յուզ ժամանակու. բանց եկն Առլանն Խորանոյ, Առլանացն կշեցեալ, և հնաց զորք հայոց և վրաց. և աւելից զարգացմ զաւասո. վասն այս պատմափի և այլ յուղից մասց անաւարտ. նետոյ այց ան Դիքոր անոն, Կազարեցի, որ յառան արքինաւորեալ էր ի շինուն եկեղեցւոյն, վերսէն ի նեան ունալ՝ աւրածաց զնու ի ԱՌ. թուականին նետ. Կիր. նոյնէ է 130.»

եւ ամուսին Թամար. Աքէլ եւ Փէրամ շինեցին զեկեղեցիս... տնկեցին զայգին. Տէր Յովհաննէս եւ միաբանքս ետուն նոցա պատարագ զեկեղեցիս ի տաւնն սրբոյն Գրիգորի զե. Խորանս Մարտիրոսի, Գրիգորի, Փէրամին, Թամարին, Նազա- խաթունին եւ Մատթէոսին անխափան. Կատարիչըն աւրհ. նին յԱստուծոյ. ՈՉ-680 նայոց եւ 1231 փրկչական թուին¹⁾.

Արենիկան պատի վրայ.

3) «Ենորին Այ. կամակցութեամբ եղարցս եւ միջնոր- դութեամբ սը. Գրիգորիսի զրեցաւ յիշատակ եղարցը մե- րոց պատրոն Սմբատաւղայ^(?) միաբան սը. ուխտիս եւ սահ- մանեցար ի տաւնի Դաւթի եւ Յակովրայ մատուցին պատա- րագ յամենայն եկեղեցիցն զիէսն Սմբատաւղայ եւ զիէսն ամուսնոյ իւրոյ Աթային. որ խափանէ դատի ի Տեսունէ».

Զախարովյան Խորանի ճակատին.

4) «Ժառայն Աստուծոյ Գէորգ եւ ամուսին իւր Կատայ^(?) եւ զաակը նոցին շինեցին իւրեանց ընչիւթ զխորանս. ը աւր պատարագն նոցա է ի տաւնի սրբոյն Գէորգայ. Խա- վանողըն դատին ի Տեսունէ»:

Այս արձանագրութիւնից բարձր.

5) «Մեր եղարքս Սբումայ^(?), Աբուզմար^(?) եւ Հայրա- պետ մեր հոգոյ արդիւնք յեկեղեցւոյս շինութեան տուար յուսով. մի աւր պատարագ սրբոյն Սարգսի՝ մեզ հատու- ցեն. խափանողըն դատին ի Տեսունէ»:

Հարաւային պատի վրայ, բարձր.

6) «Ես Գրիգոր^(?) միաբանեցայ եղայր նոցա ետու յիմ վստակացս ի շինութեան եկեղեցոյս եւ ստացայ զ (3) աւր պատարագ ի տաւնին սրբոցն Յովհաննու եւ Յակորայ... Միսիթարա...^(?) ըռնի^(?) Եան...^(?) ով խափանէ, դատի ի Տեսունէ. ամէն»:

Այս արձանագրութիւնից ցած, դէպի աղ.

7) «Ժամանին սրբոյն Սարգսի ա պատարագ Սարգ- սի է անխափան».

Արա կողքին, ձախ կողմը.

8) «Կամաւըն Աստուծոյ ես Ապուղամր^(?) մեծաւ յու- սով միաբանեցայ Ածածնիս. միաբանքս ետուն ա պատա- րագ... կիւրակէին»:

¹⁾ Թուափանց ճշուի համագուստահանում է Կիրակոսի առածին, որ այս եկե- ղեցւ աւարաւմք նշանակում է 82, թուին, նիշա 10 առքի յայոյ. ուշեմ 82 ըս- կիզըն է:

²⁾ Ենչաւս այս Գրիգոր Կիրակոս պատմ. յիշած Գրիգոր Կաղակէցին է: